Վերջին կաթիլը Արթիկը

արցախյան օրագիր

ԾՈՎԻՆԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Վերջին կաղամբը հրամայականը

արցախյան օրագիր

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 94(479.25):821.19-94 Բարխուդարյան
ԳՄԴ 63.3(5Հ)+84(5Հ)-442
Բ 358

Բարխուդարյան Ծովինար
Բ 358 Վերջին կարմիր շրթներկը: Արցախյան օրագիր / Ծ. Բարխուդարյան.- Եր.: Newmag, 2025.- 236 էջ

Արցախի հայաթափման հաջորդող տարում Ծովինար Բարխուդարյանը բազմաթիվ վկայություններ է հավաքել՝ ցնցող, ցավեցնող, սարսափելի, հուզիչ, ապրելու ուժ տվող: Մեկ գրքում Ծովինարն ամփոփել է իր և 12 կանանց ճշմարտությունը, պատմել իրենց ցավն աննկարագրելի արժանապատվությամբ կրող մարդկանց մասին: Գիրքն ականատեսի ճշգրիտ, փաստական վկայությունների և հուզիչ համալրումների ամբողջացում է: Հեղինակը պատմում է սեփական ու արցախցի իր հայրենակիցների պատմությունը՝ նկարագրելով արցախցու անկոտրում կամքը և ծանր գաղթի մղձավանջային ճանապարհը:

ՀՏԴ 94(479.25):821.19-94 Բարխուդարյան
ԳՄԴ 63.3(5Հ)+84(5Հ)-442

Գրքի գլխավոր հովանավոր՝
«Ամրոց» ազգային զարգացման հիմնադրամ
amrots.foundation

ISBN 978-9939-967-71-4
Ծովինար Բարխուդարյան «Վերջին կարմիր շրթներկը» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության իրավունքները պատկանում են
«Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած
պայմանագրով:

Բովանդակություն

Նախաբան 7

1. Եթե մնանք էլ, մեկնումեկը կդավաճանի մեզ… 11
2. Շանթ ու կրակ՝ ղարաբաղցու վրա… 17
3. Ջաֆարն Ալեքսանդրի հետ դու-ով էր խոսում… 24
4. Վերջին կարմիր շրթներկը… 32
5. «Ցա լեգենդա». երջանկության հորմոնն Արցախում էր արտադրվում… 38
6. Ո՛չ գնացողն էր դավաճան, ո՛չ մնացողը՝ հերոս. Սոդոմ-Գոմոր էր… 45
7. Կրակահերթ՝ ծխախոտի հերթի պահին… 49
8. Ռուսական տանկը մտավ գյուղ, ադրբեջանցիները՝ նույնպես… 54
9. Կզանգեմ Բաքվից, հիմա զբաղված եմ… 58
10. Գիժ էր. խաղաղ օրերին հայհոյում էր, պատերազմի ժամանակ՝ երգում… 65
11. Խաբում են, թուրքը գրավելով գալիս է, մերոնք նահանջում են՝ ասեի՞… 69
12. Վազում եմ թշնամու դիակների կողքով… 74
13. Էսօր էլ չմեռանք շատ պատահական… 79
14. Որ դիակը ճանաչելու խնդիր չլինի, զանգեցի… 83
15. Առաջին զոհերը երեխաներ էին… 89
16. Եթե տեսնում եք/կարդում եք, լո՛ւր տվեք… 93
17. Թշնամին ծեծված էր… 99
18. Կամանձի՛ր, թորքերը հարձակվալ ըն նորից… 104

19. Ադրբեջանցի զինվորը ծամածռեց դեմքը... 108
20. Եթե մեռնես, քարիդ գրելու եմ՝ դավաճան ... 114
21. Արխային կացիք, անի նե պրայդուտ... 121
22. Հարսս ճաշը եփում ա, կամայուտրը՝ միացնում... 128
23. Զրոյից եմ եկել, էշով... 133
24. Սիրտը չի դիմացել. մեր վերջին խոսակցության ժամանակ Սյունիքում էր 138
25. Պուտինն էլ ա շատ լավ հայերի դեմ... 142
26. Արյան ու ծխացող բեկորների մեջ դիակապտությամբ էին զբաղված... 149
27. Ստալինի նկարը դեն նետեցին, որ էլ թաքուն տեղում չպահեն Վազգեն Առաջինի դիմանկարը... 154
28. Մութալիբովը հրաժարվեց ներս մտնել... 159
29. Երեսին մուր քսեց, որ գրավիչ չլինի թուրքի համար... 166
30. Երբ շատ չէին կրակում, դպրոց էինք գնում... 172
31. «Գեներալնի ուբորկա»՝ պարող քաղաքում 178
31. Ինչպես հայաթափվեց Արցախը. ականատեսների վկայություններ... 186

Վերջաբան 229

Նախաբան

«Հիշելը հեշտ է նրանց համար, ովքեր ունեն հիշողություն,
մոռանալը դժվար է նրանց համար, ովքեր սիրտ ունեն»:
Գաբրիել Գարսիա Մարկես

Պատերազմի ժամանակ Ծովինարին չէի բարևում: Առավոտյան «Հայլուրի» թռուցկաժողովից առաջ գրում էի. «Ծովա՛...»: Իսկ նա՝ «Էքսկլյուզիվ ունենք Հադրութից, ուղարկում եմ Աննային», «Դիվերսիոն խմբերն արդեն Ավետարանոց են», «Գյուղերը դատարկվել են, զինվորները՝ ներվային են, հիասթափված»...

Ուշ երեկոյան՝ «Հայլուրի» վերջին թողարկումից հետո, նորից. «Ծովա՛...»: «Լյավնք, պրծավ, դե, բամբյոժկան», «Առավոտ գնալու եմ «Եղնիկներ», ինձ չփնտրեք», «Քնի՛, հրե՛շ, կուճիր հրեշը արթուն ա»...

Գիշերը, երբ քնելը դժվար էր. «Ծովա՛, կարմիր պամադայով աղջի՛կ...»:

«Կարմիր պամադայով աղջկա գլուխը պայթում ա արդեն 2 օր: Էդ հերիք չէր, երեկ էլ տվել ա ապաստարանի պատին ու օկոնչածելնո ծակել ճակատը: Հնարավոր չէ քնել, գործիընգյերները հաջողությամբ կրկնօրինակում են «Սմերչի» ձայնն ու կատարելագործված վերարտադրում գիշերը:

Ցերեկն էլ եթերների արանքում քնել չի հանդգնում, պրիչյուսկան, որով մի կերպ քողարկել ա ծակ ճակատը, չքանդելու համար: Կարմիր պամադայով աղջկա ամենամեծ վախն էն ա, որ կարմիր պամադան շուտով կպրծնի, ու ինքը կամաչի իր հընգյերներից խնդրել, բայց էդ կարմիր պամադան էնքան մարդու ա հույս տալիս»:

Ծովինար Բարխուդարյանը «5-րդ ալիքի» մշտական թղթակիցն էր (է) Արցախում: Ես՝ 5-ի լուրերի ղեկավարը: Ծովինարն իմ ընկերն է: Ծովինարը մեր նյուզռումի մեծ ու «կուճի» բոլոր հրեշների ընկերն է: Պատերազմի 44 օրերին չկարողացանք համոզել, որ գոնե մեկ-երկու օրով Հայաստան գա: Բոլորս մեզ մեղավոր էինք զգում, որ Ծովինարի համառության պատճառով չենք կարողանում փոխարինել նրան պատերազմում:

2023 թվականի աշնան վերջին մեր ընկերը Երևան հասավ: Գաղթի ճամփով: Ոչ ոք չէր համարձակվում զանգել նրան: Գոնե գրել. «Ծովա՛...»: Բայց միայն մի քանի օր:

Ծովինարին տեսա պատերազմի չավերած ժպիտով: Առանց կարմիր շրթներկի: Գունատ դեմքի վրա պատերազմի չավերած ժպիտը արցունքի պես է փայլում:

Երկու շաբաթից «հոգեթերապևտիկ» հեռուստանախագիծ առաջարկեցի՝ պատերազմական թղթակցի օրագրի պես մի բան: Հոգեբաններն ասում են՝ երբ հոգին անտանելի ցավում է, գրե՛ք, գրե՛ք, ինչ ուզում եք, ինչպես ուզում եք, թեկուզ հետո պատռեք գրառումների թղթերը: Ուզում էի՝ նա գրի, հոգին անտանելի չցավի:

«Հոգեթերապևտիկ» հեռուստանախագիծն անվանեցինք «Ականատեսը»: Տեսախցիկի առաջ՝ իսկական հեռուստատեսային մարդու դրախտում, Ծովինարը սկսեց պատմել իր

պատմությունը՝ բռնագաղթից մինչև Շարժում: Շաբաթը մեկ: Յոթ ամիս: Դրվագ առ դրվագ: 31 հաղորդում:

Պատմելու համար լավ հիշողություն ու հատկապես մեծ սիրտ ունի Ծովինարը:

«Վերջին կարմիր շրթներկը» գիրքը, ստացվում է, «Ականատեսը» հեռուստանախագծի տպագիր տարբերակն է՝ հուզիչ համալրումներով: Այստեղ, բացի Ծովինարի պատմությունից, 12 ուրիշ ականատեսների վկայություններ են:

Ծովինարի և 12 ուրիշ կանանց ճշմարտությունը:

Ու սա հոգեբանական սեանսի սղագրություն չէ. սա Արցախի Հանրապետության՝ ժամանակավորապես ընդհատված պատմությունն է:

Արփակ Հերիքյան,
լրագրող

1. Եթե մնանք է՛լ, մեկնումեկը կդավաճանի մեզ…

…Վերածննդի հրապարակը լցվում էր աննկարագրելի արագությամբ: Այս անգամ մեր հույսերը չէին մեզ այնտեղ տանում, այլ անորոշությունը: Մի մասն ուզում էր մեծամեծերից գոնե մի հստակ տեղեկություն ստանալ, քանի որ տարածվող լուրերը խիստ հակասական էին: Մեծ մասն արդեն անտուն էր: Սեպտեմբերի 20-ին՝ կեսօրից հետո, սկսեցին գալ գյուղերից ու քաղաքներից, փոքր ու մեծ խմբերով, բոլորը՝ տանջված ու հոգնած: Հոգնած ամեն ինչից:

Պատերազմներում, բլոկադայում ողջ մնացածները կանգնում են սարսափելի ընտրության առաջ: Ի՞նչ անել՝ հեռանա՞լ, թե՞ մնալ: Դավաճանել կենսակերպի՞ն, թե՞ հայրենիքի՞ն: Մնաս, դավաճանես ինքդ քեզ, սկզբունքներիդ, ինքնությանդ, ընտրես մի բան, որ ազատության հետ աղերս չունի: Գնաս, դավաճանես հայրենիքիդ, նախնիների հիշատակին, փոշիացնես ծանր ու երկարատև պայքարում զոհվածների վաստակը, արժեզրկես մինչև այդ եղած բոլոր երազանքներն ու նպատակները: Իսկ ուր գնաս՝ ազա՛տ ես լինելու: Իսկ թողնելո՞ւ են, որ գնաս: Մեր դեպքում մահից փախածները գնում էին դեպի «ազատություն», դեպի մի կամուրջ, որտեղ կանգնած մահասփյուռների «կամեցողությամբ» կա՛մ կանցնեիր, կա՛մ ոչ: Կա՛մ կմեռնեիր հայրենիքում, կա՛մ կմեռնես հայրենիքից դուրս:

Նկար 1. Ստեփանակերտի Վերածննդի հրապարակ, սեպտեմբերի 24, 2023 թ.

Մենք ընտրություն ունեինք: Շատերը կասեն՝ ոչ: Ես կասեմ՝ այո: Ես և գրեթե բոլորն ընտրեցին երկրորդ տարբերակը: Մեռնել հայրենիքից դուրս՝ կարոտից, ցավից, անարդարությունից, անհայրենիքությունից:

Փախստականների առաջին խումբը Հարավ գյուղից էր: Ստեփանակերտը նրանց օգնել, իհարկե, ուզում էր, բայց չէր կարող: Դեռ կռվող (իսկ քաղաքի մատույցներում կռիվը դեռ շարունակվում էր) ու վաղուց քաղցող քաղաքը կարող էր միայն տաք հագուստի մասին հոգալ: Հաց, եթե նույնիսկ շատ ցանկանայինք, չէինք կարող տալ: Չկար, պարզապես չըկար: Ես ու դստրիկս էլ սկսեցինք հագուստ հավաքել՝ մեծերի ու փոքրերի: Ես հավաքում էի, Բելլան ու ընկերները տանում էին դպրոցներ, հյուրանոցներ: 5-րդ անգամ, որ պիտի դուրս

Նկար 2. Առաջին բռնի տեղահանվածներն Ասկերանից ու Մարտակերտից էին, սեպտեմբերի 24, 2023 թ.

գար, ամուսինս եկավ: Ծանր լռեց, ծխեց, հետո էլի լռեց, ջուր խմեց, ապա հանկարծ ասաց, որ իր կռիվն ավարտել է, ստացել է վերջին հրամանը՝ ազատ եք:

— Մի երկու պայուսակ էլ մեզ համար հավաքի՛ր: Մենք էլ ենք հեռանում, որովհետև ասում են՝ հետո, կարող է, այլևս չկարողանանք գնալ: Հետո, եթե մնանք էլ, մեկնումեկը կդավաճանի մեզ, հետո… Մի խոսքով՝ մնալն անհնար է, ելքը գնալն է, եթե, իհարկե, ելքում չբռնեն:

Իմ բոլոր փաստարկներն ակնթարթորեն փշուր-փշուր էր անում: Երբ սկսեց կրակը նետել զինվորական համազգեստը՝ 19-ամյա ծառայության խորհրդանիշը, որով 3 պատերազմ է անցել, ի նշան բողոքի՝ հավաքեցի տոնական զգեստներս: Ինքը նետում էր, ես՝ հետևից. իմն ավելի շատ էր:

Նկար 3. Մարդիկ վերցրել էին միայն առաջին անհրաժեշտության պարագաներ, սեպտեմբերի 25, 2023 թ.

Նկարներն ու մեդալները պահեցի. Խծաբերդի պաշտպանության համար ստացած «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանն ամրացրի բլուզիս: Եթե բռնեն, կասեմ՝ կրծքազարդ է... Միամի՛տ: Կրակը դրանք չպիտի կուլ տա: Տունը հավաքեցի, ծաղիկները ջրեցի, պայուսակների մեջ խնամքով տեղավորեցի Աստվածաշունչն ու Արցախի Հանրապետության ատլասը: Չկարողացա տունը նկարել, չկարողացա գրադարանիս նայել, որ հավաքել էի 20 տարի՝ առաջին աշխատավարձից մինչև վերջին պատերազմից ընդամենը օրեր առաջ: Ոչինչ չէի զգում: Բայց երբ նայեցի անկյունում դրված ուտելիքով լեցուն արկղին, արցունքներս գլորվեցին: Առավոտյան մի կուշտ ուրախացել էի, բայց չէի հասցրել մի բան պատրաստել կշտանալու համար: Մեր ընկերը Պատարայից կնոջ հետ մի մեծ

Նկար 4. Հրապարակում կամավորները հաց էին բաժանում շրջաններից եկածներին, սեպտեմբերի 25, 2023 թ.

արկղ էր բերել՝ կաղամբ, գազար, կարտոֆիլ, ալյուր, պահածո. չտեսնված ճոխություն՝ սոված մարդկանց համար: Ես նույնիսկ հաշվել էի, թե քանի անգամ եմ ճաշ պատրաստելու: Տասն օր կարող էր ճաշ ունենալ երեք ընտանիք՝ իմ և քույրերիս: Մեր տան բանալին թողեցի մշտական տեղը՝ լվացքի ամրակների ամանի մեջ: Մեծ աղջիկս Երևանում էր, երրորդ կուրսի ուսանողուհի էր: Զանգեց, ասաց. «Մա՛մ, ես այդպես էլ չկարողացա տուն գալ, խնդրում եմ, պապիկիս այգուց մի բուռ հող բե՛ր»:

...Մենք դարձանք մեր հողերը փոքրիկ տոպրակներում տանող ժողովուրդ: Ես չգիտեմ՝ աշխարհում կա՞ մի ազգ, որ սեփական հողը հուշանվեր է դարձնում... Մտածեցի՝ տեսնես Վանից հեռացող մարդիկ ժամանակ ունեցե՞լ են իրենց հետ հող վերցնելու:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark